«ԻԶՄԻՐԼՅԱՆ» Բժշկական Կենտրոն ՓԲԸ

Տարեկան ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված
տարվա վերաբերյալ

Սեպտեմբեր 2024
Երևան

**Տարեկան ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորի եզրակացություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ**

**Բովանդակություն**


| | |
|---|---|
| 3 | Անկախ աուդիտորի եզրակացություն |
| 6 | Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն |
| 7 | Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն |
| 8 | Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն |
| 9 | Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն |
| 10 | Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ |
| 11 | Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ |


---

| | |
|---|---|
| **Ընկերության գտնվելու վայրը՝** | Հայաստանի Հանրապետություն |
| **Իրավական ձևը՝** | Փակ Բաժնետիրական Ընկերություն |
| **Հիմնական գործունեության նկարագիրը՝** | Ընկերության գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում |
| **Գործադիր տնօրեն՝** | Արմեն Չարչյան |

BDO

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str., 5th Floor, office 7
Yerevan, Armenia

# Անկախ աուդիտորի եզրակացություն

*Ներկայացվում է «ԻԶՄԻՐԼՅԱՆ» Բժշկական Կենտրոն Փակ Բաժնետիրական Ընկերության բաժնետերին*

**Կարծիք**

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԻԶՄԻՐԼՅԱՆ» Բժշկական Կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներ) համաձայն :

**Կարծիքի հիմք**

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկայի պահպանման մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան:

Մենք հավատացած ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

**Այլ հանգամանք ՝ աուդիտի շրջանակ**

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համադրելի տեղեկատվությունը աուդիտ անցած չէ:

Մենք չենք իրականացրել Ընկերության 2022 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ կամ վերանայում և, համապատասխանաբար, մենք կարծիք կամ հավաստիացման որևէ այլ մակարդակ չենք արտահայտում 2022թ. ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

**Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության

դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

## Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի հաշվետվությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str., 5th Floor, office 7
Yerevan, Armenia

Ղեկավարությանը և կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Սերգեյ Յակովլև, FCCA
Աուդիտի գործընկեր

30 սեպտեմբեր 2024թ.

ք.Երևան

«ԻԶՄԻՐԼՅԱՆ» Բժշկական Կենտրոն ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

| | Ծնթ. | 31 դեկտեմբեր 2023<br>Հազ. դրամ | 31 դեկտեմբեր 2022<br>Հազ. դրամ (աուդիտի չենթարկված) |
|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 5 | 3,782,485 | 4,192,626 |
| Ոչ նյութական ակտիվներ | | 13,507 | - |
| Կանխավճարներ հիմնական միջոցների գծով | | 138,567 | 12,475 |
| | | **3,934,559** | **4,205,101** |
| **Ընթացիկ ակտիվներ** | | | |
| Պաշարներ | 6 | 153,157 | 148,165 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 7 | 174,548 | 171,901 |
| Դրամական միջոցներ | 8 | 427,686 | 430,906 |
| | | **755,391** | **750,972** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ** | | **4,689,950** | **4,956,073** |
| **Սեփական կապիտալ** | | | |
| Կանոնադրական կապիտալ | | 515,622 | 515,622 |
| Կուտակված շահույթ | | 486,886 | 423,649 |
| | | **1,002,508** | **939,271** |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Հետաձգված հարկային պարտավորություն | 11 | 51,983 | 39,985 |
| Ակտիվներին վերաբերող շնորհ | | 14,960 | 17,454 |
| | | **66,943** | **57,439** |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Փոխառություններ | 9 | 3,391,410 | 3,767,010 |
| Եկամուտներին վերաբերող շնորհ | | 20,295 | 21,603 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 10 | 206,015 | 154,863 |
| Շահութահարկի գծով պարտավորություն | | 2,779 | 15,887 |
| | | **3,620,499** | **3,959,363** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | **4,689,950** | **4,956,073** |

Ֆինանսական հաշվետվությունները և կից ծանոթագրությունները ներկայացված 6-28 էջերում հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2024թ. սեպտեմբերի 30-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Արմեն Զարգյան
Գործադիր տնօրեն

Անահիտ Յոլյան
Գլխավոր հաշվապահ

«ԻԶՄԻՐԼՅԱՆ» Բժշկական Կենտրոն ՓԲԸ
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

| | Ծնթ. | 2023թ. Հազ. դրամ | 2022թ. Հազ. դրամ (աուդիտի չենթարկված) |
|---|---|---|---|
| Հասույթ | 12 | 3,203,835 | **3,097,078** |
| Ինքնարժեք | 13 | (2,810,266) | **(2,713,223)** |
| **Համախառն եկամուտ** | | **393,569** | **383,855** |
| Իրացման ծախսեր | | (4,496) | (3,722) |
| Վարչական ծախսեր | 14 | (309,971) | (262,083) |
| Այլ եկամուտ | 15 | 52,758 | 68,536 |
| Այլ ծախսեր | | (40,483) | (21,028) |
| Այլ կորուստ | | (653) | (691) |
| ***Շահույթ մինչև հարկումը*** | | **90,724** | **164,867** |
| Շահութահարկի գծով ծախս | 11 | (27,487) | (29,658) |
| ***Տարվա զուտ շահույթ*** | | **63,237** | **135,209** |
| *Այլ համապարփակ ֆինանսական արդյունք* | | - | - |
| ***Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք*** | | **63,237** | **135,209** |

«ԻԶՄԻՐԼՅԱՆ» Բժշկական Կենտրոն ՓԲԸ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

| | 2023թ. Հազ. դրամ | 2022թ. Հազ. դրամ (աուդիտի չենթարկված) |
|---|---|---|
| ***Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր*** | | |
| Բժշկական ծառայություններից մուտքեր | 3,177,661 | 3,098,036 |
| Ստացված տոկոսներ | 15,925 | 11,879 |
| Այլ մուտքեր | 25,884 | 23,608 |
| | ***3,219,470*** | ***3,133,523*** |
| Դեղերի, պարագաների և նյութերի ձեռքբերման դիմաց վճարումներ | (585,638) | (497,683) |
| Ծառայությունների գծով վճարումներ | (325,485) | (316,959) |
| Վճարումներ աշխատավարձի գծով | (1,766,716) | (1,690,482) |
| Հարկային վճարներ | 8,984 | 12,659 |
| Այլ ելքեր | (8,883) | (9,707) |
| | ***(2,677,738)*** | ***(2,502,172)*** |
| ***Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսք*** | ***541,732*** | ***631,351*** |
| ***Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր*** | | |
| Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով ելքեր | (145,119) | (57,395) |
| ***Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսք*** | ***(145,119)*** | ***(57,395)*** |
| ***Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր*** | | |
| Կապակցված կողմերից փոխառությունների զուտ մարում | (400,000) | (500,000) |
| ***Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր*** | ***(400,000)*** | ***(500,000)*** |
| ***Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր*** | **(3,387)** | **73,956** |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով | 167 | (707) |
| Դրամական միջոցներ տարեսկզբի դրությամբ | 430,906 | 357,657 |
| ***Դրամական միջոցներ տարեվերջի դրությամբ*** | **427,686** | **430,906** |

«ԻԶՄԻՐԼՅԱՆ» Բժշկական Կենտրոն ՓԲԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

| | Կանոնա-դրական կապիտալ | Կուտակված շահույթ | Ընդամենը |
|---|---|---|---|
| | Հազ. դրամ | Հազ. դրամ | Հազ. դրամ |
| **Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ. (աուդիտի չենթարկված)** | **515,622** | **423,649** | **939,271** |
| Տարվա շահույթ | - | 63,237 | 63,237 |
| **Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **515,622** | **486,886** | **1,002,508** |

| | Կանոնա-դրական կապիտալ | Կուտակված շահույթ | Ընդամենը |
|---|---|---|---|
| | Հազ. դրամ | Հազ. դրամ | Հազ. դրամ |
| **Մնացորդն առ 1 հունվարի 2022թ.** | **515,622** | **288,440** | **804,062** |
| Տարվա շահույթ | - | 135,209 | 135,209 |
| **Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ. (աուդիտի չենթարկված)** | **515,622** | **423,649** | **939,271** |

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկություններ ... 11
2. Պատրաստման հիմունքներ ... 12
3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ ... 13
4. Ֆինանսական գործիքներ ... 14
5. Հիմնական միջոցներ ... 18
6. Պաշարներ ... 19
7. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր ... 19
8. Դրամական միջոցներ ... 20
9. Փոխառություններ ... 20
10. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր ... 21
11. Շահութահարկ ... 21
12. Հասույթ ... 22
13. Ինքնարժեք ... 22
14. Վարչական ծախսեր ... 23
15. Այլ եկամուտ ... 23
16. Պայմանական դեպքեր ... 23
17. Գործարքներ կապակցված կողմերի հետ ... 24
18. Իրական արժեքի չափման բացահայտումներ ... 25
19. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ ... 25

## 1. Ընդհանուր տեղեկություններ

«ԻԶՄԻՐԼՅԱՆ» Բժշկական Կենտրոն Փակ Բաժնետիրական Ընկերությունը (Ընկերություն) հանդիսանում է վերանվանված «Սուրբ Ներսես Մեծ» ԳԲԿ ՓԲԸ-ի իրավահաջորդը:

«Սուրբ Ներսես Մեծ» ԳԲԿ ՓԲԸ-ն ստեղծվել է 08.10.2002թ.-ին (գրանցման թիվ՝ 264.120.05954, պետական գրանցման վկայական՝ 03Ա056060, ՀՎՀՀ 00007748) և հանդիսանում է 'Լ. Հ. Նազարովի անվան Պրոկտոլոգիայի ԳՀԻ' ԲԲԸ-ի իրավահաջորդը:

31.12.2020թ. դրությամբ Ընկերության բաժնետերերն են.

| Հ/Հ | Մասնակից<br>*(անվանումը)* | Բաժնեմասը<br>*(հազար դրամ)* | Բաժնեմասի չափը |
|---|---|---|---|
| 1. | Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցի (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին) | 515,622 | 100 % |

Ընկերության հիմնական գործունեությունն է՝ բարձրակարգ բժշկական ծառայության մատուցումը, մասնավորապես.

- ախտորոշում,
- բժշկական խորհրդատվություն,
- բուժում,
- վիրաբուժություն,
- բժշկական կադրերի վերապատրաստում:

Մասնագիտական գործունեությունները կարող են իրականացվել միայն լիցենզավորված մասնագետների առկայության դեպքում, որը ամբողջությամբ կրում է պատասխանատվություն մասնագիտական գործունեության համար: Ընկերության և մասնագետների իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ընկերությունը իրավասու է իրականացնելու՝

- սննդի կազմակերպում,
- ավտոկայանատեղի կազմակերպում,
- Լվացքատան ծառայություններ:

Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն:

Ընկերության աշխատակիցների թիվը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 395 աշխատակից (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 386 աշխատակից):

Ընկերության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Ավետիս Ահարոնյան 6:

*Հայաստանի Գործարար միջավայրը*

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Արցախի Հանրապետությունում պատերազմը և վիճարկելի տարածքների շուրջ ընթացող քաղաքական զարգացումները զգալի ազդեցություն են ունեցել Հայաստանի տնտեսության վրա: Ներկայիս փուլը կարելի է բնութագրել որպես կայուն վերականգնման ժամանակաշրջան:

Այսպիսի գործառնական միջավայրն էական ազդեցություն ունի Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ Ընկերության գործունեության կայունությունն ապահովելու նպատակով, այդուհանդերձ, ելնելով իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությունից՝ Ղեկավարությունը հնարավորություն չունի արժանահավատ գնահատական տալ, թե նման հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Ընկերության հետագա տարիների ֆինանսական վիճակի վրա:

## 2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 20-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության ֆունկցիոնալ արժույթը: Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

*Չափման հիմքերը*

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիման վրա բացառությամբ բաժնետոմսերում ներդրումները, որոնք չափվել են իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող:

*Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ*

Ընկերությունը 2023 թվականի հունվարի 1-ից իր տարեկան հաշվետու ժամանակաշրջանի համար առաջին անգամ կիրառել է հետևյալ ստանդարտներն ու փոփոխությունները

- *Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8 փոփոխություն)*
- *Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումներ (ՀՀՄՍ 1 և ՖՀՄՍ Գործնական Հայտարարության 2 փոփոխություն)*
- Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ի հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ, հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխություններ և սխալներ)

Հրապարակված ՖՀՄՍ-ներ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների որոշակի փոփոխությունները, որոնք պարտադիր չեն 2023 թվականի դեկտեմբերի 31-ի հաշվետու ժամանակաշրջանների համար Ընկերության կոմից վաղաժամկետ չեն ընդունվել: Ակնկալվում է, որ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Ընկերության վրա ընթացիկ կամ ապագա հաշվետու ժամանակաշրջաններում:

## 3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

***<u>Գնահատումներ և ենթադրություններ</u>***

*Անտոկոս փոխառությունների չափում - ծնթ. 9:*

Ընկերությունը ստացել է անտոկոս փոխառություններ Ընկերության նկատմամբ վերահսկողություն ունեցող անձից, որպես դրամական հոսքերի կառավարման համակարգի բաղկացուցիչ մաս: Ընկերությունը չունի անվերապահ իրավունք հետաձգելու փոխառությունների գծով մարումները հաշվետու ամսաթվից հետո նվազագույնը տասներկու ամիս, ինչպես նաև, չի վերահսկում փոխառությունների ստացման կամ մարման ժամկետները:
Ուստի նման փոխառությունները դիտվում են որպես ցպահանջ փոխառություններ, դասակարգվում են որպես ընթացիկ, ճանաչվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով զրո տոկոս արդյունավետ տոկոսադրույք:

*Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ*

Ակտիվի օգտակար ծառայության ժամկետը վերջինիս օգտագործման ժամկետի գնահատումն է (ի տարբերություն դրա գոյատևման ժամկետի): Հիմնական միջոցների միավորների օգտակար ծառայության ժամկետների գնահատումը դատողության հարց է, որը հիմնված է նման ակտիվների փորձի վրա: Ղեկավարությունը գնահատում է մնացած օգտակար ծառայության ժամկետները ըստ ակտիվների ընթացիկ տեխնիկական վիճակի և գնահատված ժամանակահատվածի, որի ընթացքում ակնկալվում է, որ ակտիվները կազմակերպության համար տնտեսական օգուտներ կբերեն: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են լինել էականորեն տարբեր:

*Անընդհատության սկզբունքի կիրառում*

Ընկերության ընթացիկ պարտավորությունները գերազանցում են ընթացիկ ակտիվները 2,890,781 հազար դրամով (2022՝ 3,208,391 հազար դրամով): Հաշվի առնելով այլ հանգամանքների թվում նաև այս փաստը, Ընկերության ղեկավարությունը պատշաճ է համարում անընդհատության սկզբունքի կիրառումը, քանի որ ընթացիկ պարտավորությունների մեջ ներառված է 3,391,410 հազար դրամի (2022՝ 3,767,010 հազար դրամի) չափով փոխառություն Ընկերության մայր կազմակերպության կողմից: Միաժամանակ Մայր կազմակերպությունը հաստատել է, որ նպատակադրված չէ պահանջել վճարման այնպիսի ծավալ, որը կհանգեցնի Ընկերության հետագա գործունեության անհնարվարությանը:

*Իրական արժեքի չափում*

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- *Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված)*

- *Մակարդակ 2: Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից*
- *Մակարդակ 3: Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)*

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

Կազմակերպությանը պատկանող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը հավասարվում է դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ զեղչման ազդեցությունը աննշան է:

## 4. Ֆինանսական գործիքներ

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ
- Արտարժութային ռիսկ
- Այլ գնային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

### (ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Առևտրային դեբիտորական պարտքեր,
- Դրամական միջոցներ,
- Առևտրային կրեդիտորական պարտքեր,
- Փոխառություններ:

### (բ) Ֆինանսական գործիքներ կատեգորիաներով

Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ խմբերին.

### Ֆինանսական ակտիվներ

| | Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ | |
|---|---|---|
| | **31 դեկտեմբեր 2023** | **31 դեկտեմբեր 2022** |
| | **Հազ. դրամ** | **Հազ. դրամ** |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 166,960 | 165,419 |
| Դրամական միջոցներ | 427,686 | 430,906 |
| ***Ընդամենը ֆինանսական ակտիվներ*** | **594,646** | **596,325** |

Ֆինանսական պարտավորություններ

| | Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ | |
|---|---|---|
| | 31 դեկտեմբեր 2023 | 31 դեկտեմբեր 2022 |
| | Հազ. դրամ | Հազ. դրամ |
| Փոխառություններ | 3,391,410 | 3,767,010 |
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 85,046 | 98,184 |
| *Ընդամենը ֆինանսական պարտավորություններ* | **3,476,456** | **3,865,194** |

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են՝ դրամական միջոցները, առևտրային դեբիտորական պարտքերը, առևտրային կրեդիտորական պարտքերը և փոխառությունները:

Դրամական միջոցների, առևտրային դեբիտորական պարտքերի, առևտրային կրեդիտորական պարտքերի և փոխառությունների հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

Ծանոթագրություն 20-ում ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդների և առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերի իրական արժեքի որոշման հետ կապված նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

*Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ*

Ընկերության նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ չանդրադառնալով նրա մրցունակության և ճկունության վրա: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

*Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Ընկերության առևտրային դեբիտորական պարտքը ներկայացնում է բուժծառայությունների դիմաց ստացվելիք գումարները՝ հիմնականում պետական առողջապահական գործակալությունից և ապահովագրական ընկերություններից ստացվելիք գումարները: Ընկերությունը դեբիտորական պարտքի գծով երաշխիք չի պահանջում:

Առևտրային դեբիտորական պարտքերի վերաբերյալ հետագա բացահայտումները ներկայացված են Ծանոթագրություն 7-ում:

*Շուկայական ռիսկ*

Շուկայական ռիսկն առաջանում է Ընկերության տոկոսաբեր, առևտրային և արտարժութային ֆինանսական գործիքներից: Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է տոկոսադրույքի (տոկոսադրույքային ռիսկ), արտարժութային փոխարժեքի (արտարժութային ռիսկ) կամ այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով:

*Իրական արժեքի և դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ*

Ընկերությունը չունի ստացված վարկեր և փոխառություններ՝ ֆիքսված տոկոսադրույքով, բացառությամբ միակ բաժնետերից ստացված անտոկոս փոխառությունների:

*Արտարժութային ռիսկ*

Արժութային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Արժութային ռիսկին Ընկերության հակվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով արտահայտված առևտրային գործարքների, ճանաչված ակտիվների և պարտավորությունների հետ: Ընկերությունը չի ենթարկվում արտարժութային ռիսկի, քանի որ այն չունի արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների էական մնացորդներ:

*Այլ գնային ռիսկ*

Գնային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են շուկայական գների փոփոխության արդյունքում (բացի տոկոսադրույքային և արժութային ռիսկերից առաջացողներից): Ղեկավարությունը գնահատում է, որ հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը էականորեն չի տարբերվում նրանց ընթացիկ արժեքից:

*Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, երբ Ընկերությունը դժվարություններ է ունենում այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են՝ դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվներ տրամադրելով:

Ընկերության ղեկավարությունը շարունակական մոնիտորինգ է իրականացնում Ընկերության իրացվելիության գծով՝ ապահովելու համար գործառնական գործունեության համար անհրաժեշտ դրամական միջոցների առկայությունը:

Ընկերությունը չունի ածանցյալ ֆինանսական պարտավորություններ:

Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսական պարտավորությունների (չզեղչված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները:

| **Առ 31-ը դեկտեմբերի 2023թ.** | **Մինչև 3 ամիս Հազ. դրամ** | **3-ից 12 ամիս Հազ. դրամ** | **1-ից 2 տարի Հազ. դրամ** | **2-ից 5 տարի Հազ. դրամ** | **5 տարուց ավելի Հազ. դրամ** |
|---|---|---|---|---|---|
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 85,046 | - | - | - | - |
| Փոխառություններ | - | 3,391,410 | - | - | - |
| **Ընդամենը** | **85,046** | **3,391,410** | **-** | **-** | **-** |

| **Առ 31-ը դեկտեմբերի 2022թ.** | **Մինչև 3 ամիս Հազ. դրամ** | **3-ից 12 ամիս Հազ. դրամ** | **1-ից 2 տարի Հազ. դրամ** | **2-ից 5 տարի Հազ. դրամ** | **5 տարուց ավելի Հազ. դրամ** |
|---|---|---|---|---|---|
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 98,184 | - | - | - | - |
| Փոխառություններ | - | 3,767,010 | - | - | - |
| **Ընդամենը** | **98,184** | **3,767,010** | **-** | **-** | **-** |

*Կապիտալին վերաբերող բացահայտումներ*

Ընկերությունը իր կապիտալը կառավարում է՝ ապահովելու համար Ընկերության շարունակական գործունեությունը և մասնակիցների շահույթը:

Ընկերության կապիտալի կառուցվածքը ներառում է փոխառու միջոցները (ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորություններ) և սեփական կապիտալը (ներառող կանոնադրական կապիտալը և կուտակված շահույթը):

Հաշվետու ամսաթվի դրությամբ և նախորդ տարեվերջի դրությամբ Ընկերության փոխառու միջոցները մեծ մասամբ կազմված են կապակցված կողմերից ստացված անտոկոս փոխառություններից: (ծնթ. 9): Ընկերությունը չունի կապիտալի արտաքին ներգործության պահանջներ:

Ընկերության՝ որպես կապիտալ կառավարվող գումարները հաշվետու տարվա համար ամփոփված են ստորև.

| | 31 դեկտեմբեր 2023<br>Հազ. դրամ | 31 դեկտեմբեր 2022<br>Հազ. դրամ |
|---|---|---|
| Փոխառություններ/վարկեր | 3,391,410 | 3,767,010 |
| Հանած՝ մնացորդներ դրամարկղում և բանկերում | (427,686) | (430,906) |
| **Զուտ պարտք** | **2,963,724** | **3,336,104** |
| **Ընդհանուր սեփական կապիտալ** | **978,015** | **899,648** |
| **Պարտք/ Կապիտալ գործակից** | **3.0** | **3.7** |

## 5. Հիմնական միջոցներ

| | Շենք, հողամաս և կառուցվածքներ | Տրանսպորտային միջոցներ | Բժշկական գործիքներ և սարքավորումներ | Համակարգիչներ, ՏՏ սարքավորումներ | Գրասենյակային և տնտեսական գույք | Բազմամյա տնկարկներ | Հող | Անավարտ ՀՄ-ներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *Սկզբնական արժեք* | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ |
| **Առ 1-ը հունվարի 2022թ** | 3,943,416 | 18,000 | 5,113,589 | 71,567 | 398,643 | 3,935 | 17,045 | 2,370 | **9,568,565** |
| Ավելացումներ | - | - | 26,279 | 5,511 | 8,592 | - | - | - | **40,382** |
| Նվազեցումներ | - | - | (3,114) | - | (140) | - | - | - | **(3,254)** |
| **Առ 31-ը դեկտեմբերի 2022թ** | 3,943,416 | 18,000 | 5,136,754 | 77,078 | 407,095 | 3,935 | 17,045 | 2,370 | **9,605,693** |
| **Առ 1-ը հունվարի 2023թ.** | **3,943,416** | **18,000** | **5,136,754** | **77,078** | **407,095** | **3,935** | **17,045** | **2,370** | **9,605,693** |
| Ավելացումներ | - | 320 | 62,704 | 23,277 | 9,441 | - | - | - | **95,742** |
| Նվազեցումներ | - | - | (4,879) | - | (364) | - | - | - | **(5,243)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **3,943,416** | **18,320** | **5,194,579** | **100,355** | **416,172** | **3,935** | **17,045** | **2,370** | **9,696,192** |
| *Կուտակված մաշվածություն* | | | | | | | | | |
| **Առ 1-ը հունվարի 2022թ** | 1,537,390 | 18,000 | 2,905,033 | 70,670 | 372,867 | 3,845 | - | - | **4,907,805** |
| Ավելացումներ | 158,030 | - | 343,666 | 1,090 | 5,712 | 18 | - | - | **508,516** |
| Նվազեցումներ | - | - | (3,114) | - | (140) | - | - | - | **(3,254)** |
| **Առ 31-ը դեկտեմբերի 2022թ** | **1,695,420** | **18,000** | **3,245,585** | **71,760** | **378,439** | **3,863** | - | - | **5,413,067** |
| **Առ 1-ը հունվարի 2023թ.** | **1,695,420** | **18,000** | **3,245,585** | **71,760** | **378,439** | **3,863** | - | - | **5,413,067** |
| Ավելացումներ | 158,030 | 27 | 314,906 | 24,247 | 7,559 | 18 | - | - | **504,787** |
| Նվազեցումներ | - | - | (4,048) | - | (99) | - | - | - | **(4,147)** |
| **Առ 31-ը դեկտեմբերի 2023թ.** | **1,853,450** | **18,027** | **3,556,443** | **96,007** | **385,899** | **3,881** | - | - | **5,913,707** |
| *Զուտ հաշվեկշռային արժեք* | | | | | | | | | |
| Առ 1-ը հունվարի 2022թ. | 2,406,026 | - | 2,208,556 | 897 | 25,776 | 90 | 17,045 | 2,370 | **4,660,760** |
| Առ 31-ը դեկտեմբերի 2022թ. | 2,247,996 | - | 1,891,169 | 5,318 | 28,656 | 72 | 17,045 | 2,370 | **4,192,626** |
| **Առ 31-ը դեկտեմբերի 2023թ.** | **2,089,966** | **293** | **1,638,136** | **4,348** | **30,273** | **54** | **17,045** | **2,370** | **3,782,485** |

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության լրիվ մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմել է 1,982,905 հազ. դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,405,576 հազ. դրամ):

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ այլ սահմանափակումների ենթակա հիմնական միջոցներ:

## 6. Պաշարներ

| | 31 դեկտեմբեր 2023<br>Հազ. դրամ | 31 դեկտեմբեր 2022<br>Հազ. դրամ |
|---|---|---|
| Ձեռքբերված դեղորայք | 110,808 | 110,227 |
| Անհատույց ստացված դեղորայք | 3,163 | 4,358 |
| Այլ սարքավորումներ | 15,770 | 15,770 |
| Այլ նյութեր | 23,416 | 17,810 |
| | **153,157** | **148,165** |

## 7. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

| | 31 դեկտեմբեր 2023<br>Հազ. դրամ | 31 դեկտեմբեր 2022<br>Հազ. դրամ |
|---|---|---|
| Առևտրային դեբիտորական պարտքեր բժշկական ծառայության գծով - վճարողի հիմունքով | 122,782 | 107,667 |
| Առևտրային դեբիտորական պարտքեր բժշկական ծառայության գծով - պետական պատվերի հիմունքով | 50,303 | 58,516 |
| Առևտրային դեբիտորական պարտքեր բժշկական ծառայության գծով - կապակցված կողմերից | 931 | 1,011 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 9,554 | 7,700 |
| Ակնկալվող պարտքային կորստի պահուստ (գ) | (16,610) | (9,475) |
| ***Զուտ առևտրային դեբիտորական պարտքեր*** | ***166,960*** | ***165,419*** |
| **Ընդամենը ամորտիզացված արժեքով չափով ֆինանսական ակտիվներ** | **166,960** | **165,419** |
| Այլ | 7,588 | 6,482 |
| | **174,548** | **171,901** |

ա) Ամորտիզացված արժեքով դասակարգված առևտրային և այլ դեբիտորական պարտքերի իրական արժեքը էականորեն չի տարբերվում հաշվեկշռային արժեքից:

բ) Ընկերությունը առևտրային դեբիտորական պարտքերի գծով վճարունակության ակնկալվող կորուստները գնահատելու նպատակով կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոտեցումը՝ օգտագործելով ողջ ժամկետի համար վճարունակության ակնկալվող կորուստների գնահատում: Առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են՝ որպես նմանատիպ առևտրային պարտքերին բնորոշ ռիսկայնության: Ակնկալվող կորստի դրույքները հիմնված են Ընկերության նախորդ տարվա կորուստների վիճակագրության վրա: Կորուստների պատմական դրույքը ճշգրտվել է հաշվի առնելով Ընկերության գործընկերների վրա ազդող ընթացիկ և ակնկալվող մակրոտնտեսական ցուցանիշները:

գ) 31.12.2023թ.-ի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների գծով վճարունակության ակնկալվող կորուստները գնահատումը հետևյալն է.

| 2022<br>Հազ. դրամ | Ընթացիկ | Մինչև 90 օր ժամկետանց | 91-365 օր ժամկետանց | 1 տարուց ավել ժամկետանց | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| Վճարունակության ակնկալվող կորստի դրույք (%) | 2.12% | 2.23% | 9.37% | 100.00% | - |
| Ընդամենը ընթացիկ արժեք | 154,132 | 10,966 | 4,232 | 5,564 | 174,894 |
| **Կորստի գումար** | **3,269** | **245** | **397** | **5,564** | **9,475** |

| 2023<br>Հազ. դրամ | Ընթացիկ | Մինչև 90 օր ժամկետանց | 91-365 օր ժամկետանց | 1 տարուց ավել ժամկետանց | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| Վճարունակության ակնկալվող կորստի դրույք (%) | 1.24% | 2.23% | 9.37% | 100.00% | - |
| Ընդամենը ընթացիկ արժեք | 157,645 | 7,168 | 4,717 | 14,040 | 183,570 |
| **Կորստի գումար** | **1,968** | **160** | **442** | **14,040** | **16,610** |

## 8. Դրամական միջոցներ

| | 31 դեկտեմբեր 2023<br>Հազ. դրամ | 31 դեկտեմբեր 2022<br>Հազ. դրամ |
|---|---|---|
| Հաշվարկային հաշիվներում (ՀՀ դրամով) | 421,284 | 427,486 |
| Հաշվարկային հաշիվներում (արտարժույթով) | 2,682 | 2,607 |
| Դրամարկղում | 433 | 716 |
| Դրամական միջոցներ ճանապարհին | 3,287 | 97 |
| | **427,686** | **430,906** |

Դրամական միջոցները պահվում են ՀՀ վստահելի առևտրային բանկերում:

## 9. Փոխառություններ

Փոխառությունները ստացվել են կապակցված կողմերից՝ անտոկոս: Փոխառությունների դիմաց գույքային կամ այլ երաշխիքներ կամ գրավներ չեն տրամադրվել:

| | 2023թ.<br>Հազ. դրամ | 2022թ.<br>Հազ. դրամ |
|---|---|---|
| **Տարեսկզբի մնացորդ** | 3,767,010 | 4,258,380 |
| Ստացում | 24,643 | 8,800 |
| Մարում | (400,243) | (500,170) |
| **Տարեվերջի մնացորդ** | **3,391,410** | **3,767,010** |

## 10. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

| | 31 դեկտեմբեր 2023 Հազ. դրամ | 31 դեկտեմբեր 2022 Հազ. դրամ |
|---|---|---|
| **Առևտրային կրեդիտորական պարտքեր** | | |
| Պաշարների գծով | 22,043 | 8,217 |
| Աշխատավարձի գծով | 28,376 | 69,066 |
| Ծառայությունների գծով | 16,707 | 20,901 |
| Հիմնական միջոցների գծով | 17,920 | - |
| ***Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ, բացառությամբ՝ վարկերի և փոխառությունների*** | **85,046** | **98,184** |
| Հարկերի գծով | 40,173 | - |
| Չօգտագործված արձակուրդային պահուստ | 78,748 | 29,155 |
| Այլ | 2,048 | 27,524 |
| | **206,015** | **154,863** |

Ամորտիզացված արժեքով դասակարգված առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի իրական արժեքը էականորեն չի տարբերվում հաշվեկշռային արժեքից:

## 11. Շահութահարկ

### 11.1 Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)

| | 2023թ. Հազ. դրամ | 2022թ. Հազ. դրամ |
|---|---|---|
| Ընթացիկ հարկի գծով | 15,489 | 15,887 |
| Հետաձգված հարկի գծով | 11,998 | 13,771 |
| | **27,487** | **29,658** |

### 11.2 Հետաձգված հարկային պարտավորություն

| | 2023թ. Հազ. դրամ | 2022թ. Հազ. դրամ |
|---|---|---|
| **Տարեսկզբի մնացորդ** | **39,985** | **26,214** |
| Տարվա ծախս/(եկամուտ) | 11,998 | 13,771 |
| **Տարեվերջի մնացորդ** | **51,983** | **39,985** |

### 11.3 Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում - ակտիվ/(պարտավորություն)

| | Սկզբնական մնացորդ | Ճանաչված շահույթում/վնասում | Վերջնական մնացորդ |
|---|---|---|---|
| **2023թ.** | Հազ. դրամ | Հազ. դրամ | Հազ. դրամ |
| Հիմնական միջոցների գծով | (52,417) | (13,741) | **(66,158)** |
| Արձակուրդային պահուստի գծով | 12,432 | 1,743 | **14,175** |
| | **(39,985)** | **(11,998)** | **(51,983)** |
| **2022թ.** | Հազ. դրամ | Հազ. դրամ | Հազ. դրամ |
| Հիմնական միջոցների գծով | (39,673) | (12,744) | **(52,417)** |
| Արձակուրդային պահուստի գծով | 13,459 | (1,027) | **12,432** |
| | **(26,214)** | **(13,771)** | **(39,985)** |

### 11.4 Արդյունավետ հարկային դրույքի համադրում

Հաշվետու տարվա համար Հայաստանի Հանրապետության «Շահութահարկի մասին» օրենքի համաձայն շահութահարկի դրույքաչափը սահմանված է 18% (2022թ.-18%): Տարվա փաստացի հարկային ծախսերի և Հայաստանում շահութահարկի սահմանված դրույքի (18%) միջև տարբերության մանրամասները ներկայացված են ստորև.

| | 2023թ. Հազ. դրամ | % | 2022թ. Հազ. դրամ | % |
|---|---|---|---|---|
| Շահույթ/(վնաս) մինչև հարկումը ըստ ՖՀՄՍ-ների | 37,564 | | 135,209 | |
| Շահութահարկի գծով ծախս՝ | 6,762 | 18 | 24,338 | 18 |
| Այլ չնվազեցվող ծախսերի/(չհարկվող եկամուտների հարկային) հետևանք | 20,725 | 55 | 5,320 | 4 |
| Շահութահարկի գծով ծախսը/(փոխհատուցումը) և հարկի արդյունավետ դրույքը | 27,487 | 73 | 29,658 | 22 |

## 12. Հասույթ

| | 2023թ. Հազ. դրամ | 2022թ. Հազ. դրամ |
|---|---|---|
| Վճարովի բժշկական ծառայությունների գծով | 2,138,114 | 2,020,422 |
| Պետական պատվերով բժշկական ծառայությունների գծով | 907,942 | 886,946 |
| Սոցիալական փաթեթի շահառուներին մատուցված բժշկական ծառայությունների գծով | 157,779 | 189,710 |
| | 3,203,835 | 3,097,078 |

## 13. Ինքնարժեք

| | 2023թ. Հազ. դրամ | 2022թ. Հազ. դրամ |
|---|---|---|
| Աշխատակիցների հատուցում | 1,516,798 | 1,437,495 |
| Դեղորայք և այլ նյութեր | 518,984 | 495,761 |
| Հիմնական միջոցների մաշվածություն | 491,019 | 501,350 |
| Կոմունալ և այլ ծախսեր | 283,465 | 278,617 |
| | 2,810,266 | 2,713,223 |

## 14. Վարչական ծախսեր

| | 2023թ.<br>Հազ. դրամ | 2022թ.<br>Հազ. դրամ |
|---|---|---|
| Աշխատակիցների հատուցում | 231,107 | 195,792 |
| Գրասենյակային և կոմունալ ծախսեր | 13,894 | 15,459 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 13,769 | 7,167 |
| Չփոխհատուցվող հարկեր | 6,010 | 5,205 |
| Ուսումնական ծախսեր | 2,703 | 1,204 |
| Բանկային ծախսեր | 7,422 | 5,487 |
| Ներկայացուցչական ծախսեր | 1,076 | 2,115 |
| Տրանսպորտային ծախսեր | 1,920 | 1,035 |
| Այլ | 32,070 | 28,619 |
| | **309,971** | **262,083** |

## 15. Այլ եկամուտ

| | 2023թ.<br>Հազ. դրամ | 2022թ.<br>Հազ. դրամ |
|---|---|---|
| Տոկոսային եկամուտ ընթացիկ հաշիվներից | 16,808 | 12,450 |
| Ավտոկայանատեղի | 15,966 | 16,155 |
| Վարձակալությունից | 12,423 | 7,975 |
| Շնորհներից | 5,395 | 18,610 |
| Այլ | 2,166 | 13,346 |
| | **52,758** | **68,536** |

## 16. Պայմանական դեպքեր

### 16.1 Ապահովագրություն

Ընկերությունը ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ Ընկերության տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով՝ մարդկանց առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցների շահագործման հետևանքով առաջացած վնասների: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ մարդկանց առողջության հասցված վնասը, որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

### 16.2 Պայմանական պարտավորություններ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ , ինչպես նաև մինչև այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթիվը՝ Ընկերության դեմ առկա է հարուցված դատական հայց նախկին աշխատակցի կողմից: Նախկին աշխատակիցը դիմել է դատարան հրամաններն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու, չստացված աշխատավարձի, դրա նկատմամբ հաշվարկված տույժերի վճարման պահանջով: Աշխատակցի հայցը բավարարվելու դեպքում հնարավոր են ֆինանսական միջոցների էական արտահոսքեր:

## 17. Գործարքներ կապակցված կողմերի հետ

### 17.1 Առևտրային գործարքներ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերությունը կապակցված կողմերի հետ իրականացրել է հետևյալ գործարքները.

| Կապակցված կողմեր | Ծառայությունների մատուցում 2023թ. Հազ. դրամ | 2022թ. Հազ. դրամ |
|---|---|---|
| Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին | 11,665 | 7,990 |
| **Ընդամենը** | **11,665** | **7,990** |

### 17.2 Առևտրային մնացորդներ

| Կապակցված կողմեր | Դեբիտորական պարտքեր 2023թ. Հազ. դրամ | 2022թ. Հազ. դրամ |
|---|---|---|
| Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին | 931 | 1,011 |
| ***Ընդամենը*** | **931** | **1,011** |

### 17.3 Փոխառություններ

Կապակցված կողմերից ստացված փոխառությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծնթ. 8-ում:

### 17.4 Առանցքային կառավարչական անձնակազմի հատուցումներ

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության առանցքային կառավարչական անձնակազմին տրված հատուցումները հետևյալն են.

| | 2023թ. Հազ. դրամ | 2022թ. Հազ. դրամ |
|---|---|---|
| Աշխատավարձ և այլ կարճաժամկետ փոխհատուցումներ | 44,446 | 37,626 |
| | **44,446** | **37,626** |

## 18. Իրական արժեքի չափման բացահայտումներ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ակտիվները և պարտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում.

| Հոդված | Իրական արժեք հազ. դրամ | Գնահատման մեթոդ | Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ | Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ |
|---|---|---|---|---|
| Փոխառություններ | 3,767,010 | Ընթացիկ Ցպահանջ փոխառությունների հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին | Մակարդակ 3 | Կիրառելի չէ |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 166,960 | Ընթացիկ Կարճաժամկետ (12 ամսից պակաս) դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին | Մակարդակ 3 | Կիրառելի չէ |
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 85,046 | Ընթացիկ Կարճաժամկետ (12 ամսից պակաս) կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին | Մակարդակ 3 | Կիրառելի չէ |

## 19. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

### 19.1 Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

### 19.2 Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում արտարժույթի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները եւ պարտավորությունները վերագնահատվում են հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ որոշվող դրույքաչափերով: Չմարված դրամային ակտիվների եւ պարտավորությունների վերագնահատման արդյունքում առաջացող փոխարժեքային տարբերությունները անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

### 19.3 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորը, որը ճանաչվում է որպես ակտիվ, չափվում է սկզբնական արժեքով: Սկզբնական ճանաչումից հետո հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Հիմնական միջոցի մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Հիմնական միջոցների

օգտակար ծառայությունը առկա բոլոր հիմնական միջոցների համար արտահայտված է ժամկետով: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

| | |
|---|---|
| *Շենքեր և կառուցվածքներ* | *20-60 տարի* |
| *Բժշկական սարքավորումներ* | *10-20 տարի* |
| *Տրանսպորտային միջոցներ* | *5-10 տարի* |
| *Համակարգիչներ, ՏՏ սարքավորումներ* | *1-5 տարի* |
| *Տնտեսական/Գրասենյակային գույք* | *5-20տարի* |
| *Բազմամյա տնկարկներ* | *8 տարի* |

19.4 Շնորհներ

Շնորհները, որոնք որոշակի պայմաններով տրվում են կանոնադրական գործունեության իրականացման նպատակով, ճանաչվում են իրենց իրական արժեքով, երբ կա հիմնավորված երաշխիք, որ.

ա) Ընկերությունը կատարելու է շնորհներին հարակից պայմանները, և
բ) շնորհներն ստացվելու են:

Հիմնական միջոցներին վերաբերող շնորհները հետաձգվում են և ճանաչվում են շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Ծախսերին վերաբերող շնորհները հետաձգվում են և ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում դրանք փոխհատուցում են այն ծախսումները, որոնց համար ստացվել են:

19.5 Պաշարներ

Պաշարները՝ դեղեր, բժշկական պարագաններ և այլն, ներկայացված են ինքնարժեքի և հնարավոր իրացման զուտ արժեքի նվազագույնով: Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է ԱՄԱԵ (առաջինը մուտք, առաջինը ելք) արժեքի բանաձևով:

Բժշկական ծառայությունների մատուցման մեջ օգտագործելու նպատակով պահվող դեղերը և այլ պաշարները չեն վերագնահատվում ինքնարժեքից ցածր, քանի որ ակնկալվում է, որ ծառայությունը, որի մատուցման նպատակով դրանք օգտագործվելու են, իրացվելու է ինքնարժեքին հավասար կամ գերազանցող գնով:

Դեղերը կամ բժկական պիտույքները, որոնց օգտագործման ժամկետը սպառվել է, կամ այլևս պիտանի չեն օգտագործման այլ հանգամանքներով դուրս են գրվում համապատասխան ժամանակաշրջանում:

19.6 Արժեզրկում

Ընկերության հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, որոշելու՝ արդ՞յոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են այդ ակտիվի (կամ ակտիվների խմբի) փոխհատուցվող գումարները և համեմատվում հաշվեկշռային արժեքի հետ: Եթե գնահատված փոխհատուցվող գումարը փոքր է, ապա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև գնահատված փոխհատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերությունը գնահատում է՝ արդյոք առկա է ինքնարժեքով կամ ամորտիզացված արժեքով չափվող որևէ ֆինանսական ակտիվի (կամ միանման ակտիվների խմբի) արժեզրկված լինելու անկողմնակալ վկայություն: Եթե

առկա է արժեզրկված լինելու անկողմնակալ վկայություն, Ընկերությունը ճանաչում է արժեզրկումից կորուստ՝ շահույթում կամ վնասում:

Եթե արժեզրկումից կորուստը հետագայում հակադարձվում է, ակտիվի (կամ ակտիվների խմբի) հաշվեկշռային արժեքը ավելացվում է մինչև դրա փոխհատուցվող գումարի վերանայված գնահատականը, սակայն ոչ ավելի, քան այն գումարը, որը կորոշվեր, եթե նախորդ տարիներին ակտիվի (կամ ակտիվների խմբի) գծով ոչ մի արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

19.7 Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցել է ծառայություն, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչվում է:

ա) որպես պարտավորություն արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը այդ տարբերությունը ճանաչում է որպես ակտիվ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

բ) որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

19.8 Հասույթի ճանաչում

19.8.1 Կատարողական պարտականություն և հասույթի ճանաչման պահը
Ընկերության հասույթը առաջանում է բժշկական ծառայություններից, որոնց գծով հասույթը ճանաչվում է այդ ծառայությունների մատուցման ժամանակաշրջանում:

Ծառայությունների կատարումը հիմնականում իրականացվում է կարճ-ժամանակաշրջանի ընթացքում՝ մեկ օրից մինչև մեկ շաբաթ:

19.8.2 Գործարքի գնի որոշում

Ընկերության հասույթները ստացվում են ֆիքսված գների պայմանագրերից և, հետևաբար, յուրաքանչյուր պայմանագրից ստացված հասույթի գումարը որոշվում է այդ ֆիքսված գներով: Եթե ծառայության գինը ներառում է մեկից ավելի կատարման պարտականություններ, օրինակ՝ ախտորոշում, վիրահատություն, հետ վիրահատական ծառայություններ, ապա ընդհանուր գինը բաշխվում է տվյալ ծառայությունների միջև կիրառելով առանձին ծառայությունների գծով գների հարաբերակցության հիմունքը:

19.9 Շահութահարկ

19.9.1 Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս և ներառվում տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթի կամ վնասի մեջ:

Ընթացիկ հարկը տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա շահութահարկի գումարն է: Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

19.9.2 Հետաձգված հարկեր

Ընկերության հետաձգված հարկերը (հետաձգված հարկային պարտավորությունները և հետաձգված հարկային ակտիվները) պայմանավորված են ժամանակավոր տարբերությունների (հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ) և չօգտագործված հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ:

Ժամանակավոր տարբերությունների հետ կապված հետաձգված հարկերը հաշվարկվում են՝ օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակով օգտագործվող գումարների (հարկային բազայի) ժամանակավոր տարբերությունների վրա:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմնվելով հարկերի այն դրույքների վրա, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

19.10 Կապակցված կողմերի բացահայտումներ

19.10.1 Կապակցված կողմերի գործարքներ

Կապակցված կողմերի հետ գործարքը ռեսուրսների, ծառայությունների կամ պարտականությունների փոխանցումն է կապակցված կողմերի միջև՝ անկախ վճարի գանձումից:

Եթե կապակցված կողմերի միջև եղել են գործարքներ, ապա Ընկերությունը բացահայտում է.

- կապակցված կողմի փոխհարաբերության բնույթը,
- գործարքի բնույթը,
- չմարված մնացորդները
    - ժամկետները և պայմանները,
    - ապահոված լինելը,
    - մարման համար վճարվելիք հատուցման բնույթը,
    - տրված կամ ստացված երաշխիքի վերաբերյալ մանրամասները,
    - կասկածելի պարտքերի պահուստները և նրանց գծով ճանաչված ծախսերը:

19.10.2 Առանցքային կառավարչական անձնակազմի գծով բացահայտումներ

Ընկերությունը բացահայտում է առանցքային կառավարչական անձնակազմի.

* հատուցումները՝կարճաժամկետ կամ հետաշխատանքային,
* ազատման նպաստները,
* մասնակցության վրա հիմնված վճարումները: